

25.229

ՊՐՈԼԵՏԱՐԻԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ր

## ԹԵԶԻՍՆԵՐ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ  
ՅԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ III ԿԱՄՊԱՆԻԱՅԻ  
(«ԱՄՍՈՐՅԱԿԻ») ԱՌԹԻՎ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՇԱԽԱՅՈՂՆԵՐԻ  
ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԶԵԿՈՒՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



1980

25.229

115 JAN 2010

332.2  
P-38

18 APR 2013

Մ/

1. ԾԱՆՐ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ  
ԴԵՐԸ ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ-  
ԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ.

ԿԵՆՍԱԳՈՐԾԵԼՈՎ ՍՈցիալիզմի գործնական  
շինարարության համաշխարհային պատմա-  
կան խնդիրը, աշխարհի առաջին Աշխատանքի  
Հանրապետությունը զարգացնում ե մեր ար-  
դյունաբերության և գյուղատնտեսության  
վերակառուցման մեծ գործի ամենաարագ  
տեմպերը սոցիալիստական սկզբունքներով:

Բանվոր դասակարգը, հենվելով չքավո-  
րության վրա, դաշնակցած գյուղացիության  
միջակային մասսաների հետ, կոմունիստա-  
կան կուսակցության ղեկավարությամբ, խո-  
շոր տնտեսական հաջողություններ ձեռք բե-  
րեց, վորոնք չեն ժխտվում նույնիսկ ամենա-  
անհաջող դասակարգային թշնամիների կող-  
մից:

Մեր յերկրի միլիոնավոր աշխատավոր-  
ները, ահագին եներգիա, ստեղծագործական  
նախաձեռնություն և ինքնազործունեյություն  
են հայտաբերում ԽՍՀՄ-ի սոցիալիստական  
ինդուստրացման հնգամյակը կենսագործելու

149/3-57

ՀԱՅՈՂԻԴՐԱՖ
Դրառելվար 40-0 բ.
Պատվ. № 1675
Տերած 2000

համար, մեր յերկիրն ագրարա-ինդուստրիալ յերկից առաջավոր ինդուստրիալ-ագրարա- յին յերկի կերպարանափոխելու համար:

Հաղթահարելով խոչընդունելու ու դժ- վարությունները, մերկացնելով և լիկվիդա- ցիայի յենթարկելով գլխավոր գծից չեղվելը, (աչ ոպորտյունիստական թեքումը և տրոց- կիստական թեքումները), կոմունիստական կուսակցությունը պրոլետարիատի և գյուղա- ցիության չքավորա-միջակային մասսաներին հաստատուն տանում և սոցիալիստական տըն- տեսության հաղթական շինարարության ու- ղիով, չահագործողների դասակարգի—կու- լակներին և նոր բուրժուազիային ամբողջովին վոչնչացնելու ուղիով, վորպես դասակարգի Խորհրդային պետության մեջ, այդ դասա- կարգի հուսահատական դիմադրության պայ- մաններում:

Մենք գործնականորեն կենսագործում ենք — «Տեխնիկա-տնտեսական տեսակետից հաս- նենք և առաջ անցնենք առաջավոր կապիտա- լիստական յերկրներին ամենակարճ պատմա- կան ժամանակամիջոցում» ինդիրը:

Դրա համար մենք զարգացնում ենք շի- նարարության առավելագույն տեմպերը, հաղթահարելով բոլոր և ամեն տեսակի դժվա- րությունները և խոչընդուները մեր ճանա- պարհին:

Ամբողջ ժողովրդական տնտեսության ա- ռաջնորդող սկզբունքը, նույն թվում և գյու-

ղատնտեսությանը, հանդիսանում ե ծանր ին- դուստրիան (արդյունաբերությունը): Մեր առաջին պլանի վրա կանգնած ե գործիքների և արտադրության միջոցների առավելագույն զարգացման խնդիրը:

Կառուցվում են նոր գործարաններ, ֆաբ- րիկաներ, հանքահորեր, մետաղագործական, մեքենա-կառուցողական հսկաներ, հայոցի վառարաններ, նավթային վիշկաներ. կա- ռուցվում են հսկա-ելեքտրոկայաններ, վո- րոնք յերկիրը կծածկեն և լեքտրական հաղոր- դիչների ցանցով. շարժիչ ու ցիցը և «Իլյէչի ծրագը» նրանք կտանեն քաղաքն ու գյուղերը, բանվորական ավանները, կոլտնտեսություն- ներն ու խորհանաեսությունները:

Վերակառուցվող գյուղատնտեսության տակ տեխնիգական նոր բաղա յե դրվում, տ- րագ տեմպով գործարաններ և ֆաբրիկաներ են կառուցվում, վորոնք գյուղատնտեսությու- նը կապահովեն անհրաժեշտ քանակի տրակ- տորներով, կոմբայններով և արտադրության ուրիշ բարդ գործիքներով, քիմիական պա- րարտանյութերով և վնասատուների դեմ պայքարելու միջոցներով:

Դա ամրապնդում ե սոցիալիստական քա- ղաքի և վերակառուցվող գյուղի միջև յեղած արտադրական կապը, քաջալերում և գյուղա- տնտեսությունը սոցիալիստական հիմունքով ամենաարագ կերպով կառուցելը և խոչըն հա- մայնացված գյուղատնտեսություն ստեղծելը,

կոլտնաւեսական և խորհունտեսական շինարարության զարգացումը, մեքենայա-տրակտորային կայանների կազմակերպումը: Այս բոլորը տանում են դեպի բերքատվության բարձրացում, ցանքային տարածությունների ընդլայնում և այլն:

Մեր աչքի առաջ տնտեսապես հետամնաց, մանր, բաժան-բաժան յեղած գյուղացիական տնտեսությունը վերակառուցվում և վերածվում ե հզոր արտադրական կոլեկտիվների. գյուղացիության չփափորա-միջակային լայն մասսաներն անցնում են հողի համայնական մշակման, գյուղատնտեսական արտադրության գործիքների համայնացման. կոլտնտեսական շինարարությունն ստանում ե խսկական մասսայական ձևեր, վերածվելով կոլեկտիվացման համատարած շրջանների: 1927-28թ. մենք ունեյինք ընդամենը 445 հազ. գյուղացիական ծուխ միացված 15,600 կոլտնտեսության մեջ. 1928-29 արգեն ունեյինք ավելի քան 1 միլիոն գյուղացիական ծուխ, միացված 61 հազար կոլտնտեսության մեջ,  $4\frac{1}{2}$  միլիոն հեկտար ցանքային տարածությամբ և 240 տոկոսով աճած ընդհանուր արտադրանք, իսկ 278 տոկոսով աճած ապրանքային արտադրանք:

Կոլեկտիվացման աննախընթաց տեմպերի հետ միաժամանակ, խոշոր հաջողություններ են ձեռք բերված և խորհունտեսությունների և մեքենայա-տրակտորային կայանների կա-

ռուցման բնագավառում: Խորհունտեսությունների ցանքային տարածությունը և նըրանց հացահատիկային արտադրանքն զգալիորեն ավելացել է: Շնորհիվ այս բոլորի, յենթադրում ենք հնդամյակի 2-րդ տարվա վերջին ստանալ գյուղատնտեսության համայնացված հատվածից ապրանքային ամբողջ հացի ավելի քան 50 տոկոսը:

Առաջնորդող սոցիալիստական արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը, ինչպես նաև գյուղատնտեսության վերակառուցման և կոլեկտիվացման բուռն պրոցեսը,—մեր յերկրի առաջ բանում են ամենալայն հեռանկարները, հենց գրանով յուրաքանչյուր աշխատավորի առաջ հրելով սոցիալիստական շինարարության պատմական պրոցեսին ամեն կերպ ակտիվ աջակցելու խնդիրը:

## II. ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՊԵՏՔ Ե ԱՐԱԳԱՑՎԱԿԻ.

Մեծ աշխատանքների հնդամյա պլանը հանդիսանում ե մեր ամբողջ յերկրի սոցիալիստական վերակառուցման գործնական ծրագիրը: Այդ պլանով նախատեսված ե ժողովրդական տնտեսության մեջ դնել 64,5 միլիարդ ռուբլու կապիտալ ներդրումներ, նախընթաց հնդամյակում ներդրված 26,5 միլիարդ ռուբլու դիմաց: Մեր ուժերը կներեն արդյոք շինարարության զարգացման այդպիսի բուռն տեմպեր:

Հնդամյակի առաջին տարվա հանրագուռ մարներն ապացուցեցին, վոր տնտեսական շինարարության համար վերցված տեմպերը վոչ միայն կենսագործելի են, վոչ միայն իրական են, այլև այն կարելի յէ արագացնել։ Հնդամյակի առաջին տարում արդյունաբերության ամբողջ (ընդհանուր) արտադրանքի յենթագրված 20 տոկոսի աճման փոխարեն մենք ունենք 24 տոկոս։

Ելեքտրոկայանների ուժեղությունն աճել է 20,3 տոկոսով, պլանով ուրվագծված 14 տոկոսի գիմաց։ Յերկաթուղիների ապրանքային շրջանառությունն աճել է 21 տոկոսով, պլանով ծրագրվածի 10 տոկոսի փոխարեն։

Կոլտնտեսությունների աճումը շատ և հետ թողել գյուղացիական տնտեսության կոլեկտիվացման բոլոր ամենահամարձակ պլանները. նրանց շանքերն ավելացել են 207 տոկոսով՝ յենթադրված 94 տոկոսի փոխարեն։

1929-30 թ. պետական բյուջեն հոկայական գումար և վորոշված՝ 11,3 միլիարդ ռուբլի, հնդամյակի պլանով յենթադրված 9,2 միլիարդ ռուբլու փոխարեն։

Միայն գյուղատնտեսության ֆինանսավորման վրա 1929-30 թ. վերստուգիչ թվերով ուրվագծված է 3,200 միլիոն ռուբլի, 1928-29 թ. 1,800 միլիոնի գիմաց։ Միայն 1929-30 թ. ընթացքում գյուղատնտեսության մեջ պիտի ներհոսի 40.000 տրակտոր (պայմանական

10 ուժանոց), վորոնցից պիտի կազմակերպվի 102 մեքենա-տրակտորային կայան։

Մեր յերկրի պրոլետարիատը սոցիալիստական շինարարության պրոցեսում, նրա ճանապարհի վրա ծառացած դժվարությունները հաղթահարելու պրոցեսում (սոցիալիստական մրցում, անընդհատ արտադրական շաբաթ, ինքնաքննագատության ծավալելը և խորացումը, բանվորական գյուտարարության աճումը, փոխառությունների տեղափորման ակտիվ մասնակցելը և այլն), հայտաբերում և հսկայական եներգիա, նախաձեռնություն և ստեղծագործություն։

Այս բոլորը մեզ տալիս ե կատարյալ իրավունք և հիմք հույս զնելու, վոր ժողովրդական տնտեսության զարգացման հնդամյա պլանը վոչ միայն չպիտի կատարվի, այլև վոր այն մենք կգերակատարենք, կամ թե հնդամյակը կկենսագործենք ավելի կարճ ժամանակմիջոցում։

III. ԱՇԽԱՎԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՍԶԱՏ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԽՍՀՄ-Ի ԽՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՀԱՄՍՐ.

1929-30 թ. վերստուգիչ թվերը հանդիսանում են ամենակարենոր ետապը հնդամյա պլանի մեծ աշխատանքները 4 տարում կատարելու համար։

Մակայն սոցիալիստական կառուցման

տեմպերի արագացումը պահանջում ե վոչ  
միայն հսկայական ուժերի լարումն, եներ-  
դիա, նախաձեռնություն և ստեղծագործու-  
թյուն, այլև ներքին միջոցների բազմատեսակ  
մորիլիզացիա, սոցիալիստական տնտեսու-  
թյան և կառավարման բոլոր բնագավառնե-  
րում տնտեսելու ամենախիստ ոեժիմ, ինչպես  
նաև բնակչության մանր և չնչին աշխատավո-  
րական խնայողությունների և ժամանակավո-  
րապես ազատ միջոցների մորիլիզացիա բյու-  
ջեն մտցնելու՝ ժողովրդական տնտեսության  
ֆինանսավորման համար:

Արտադրության մեջ, առետրում, կառա-  
վարման և մեր տնտեսության մյուս բնագա-  
վառներում ունեցած կորուստների գեմ վճռա-  
կան պայքար մղելու հետ միաժամանակ,  
պայքար, վորը կտնտեսի մեղ համար հարյու-  
րավոր միլիոն ոռուբլիներ, մենք պետք ե ամեն  
կերպ զարգացնենք մեր աշխատանքը յերկրի  
ինդուստրացման համար հավելյալ միջոցներ  
ներդրավելու գործում, մեր փոխառություն-  
ների և խնայողական գործի զարգացման մի-  
ջոցով:

Միջոցների այն ընդհանուր գումարը,  
վորն անհրաժեշտ է պետության, տնտեսա-  
վորն անհրաժեշտ է պետության, տնտեսա-  
վորն անհրաժեշտ է պետության, հա-  
կան և կուլտուրական շինարարության հա-  
մար, ինդուստրացման և ԽՍՀՄ-ի պաշտպա-  
նունակության համար, հնդամյա պլանով  
հաշված ե 86 միլիարդ ռուբլի: Այս գումարի  
ճնշող մասը կծածկվի պետական գույքերից

և ձեռնարկներից ստացվելիք յեկամուտնե-  
րից, արդյունաբերության ներքին միջոցնե-  
րից և գյուղատնտեսությունից, ինչպես նաև  
հարկերից: Սակայն այս բոլոր յեկամուտներն  
անրավարար կլինեն ժողովրդական տնտեսու-  
թյան շինարարության արագ տեմպը բավա-  
րաբելու համար, վորն ուրիշագծված ե հըն-  
գամյա պլանով: Այդ պատճառով արդյունա-  
բերության և գյուղատնտեսության մեջ դըր-  
վելիք ներդրումների վորոշ մասը պիտի ծած-  
կվի ի հաշվիվ պետքյունիցի մեջ ներդրավվող  
քաղաքի և գյուղի աշխատավորների աշխա-  
տավորական խնայողությունների և ժամա-  
նակավորապես ազատ միջոցների:

Հնդամյա պլանով փոխառությունների  
մեջ և խնայողական դրամարկղները պիտի  
ներդրավվեն Յ միլիարդ ո. միջոցներ:

Սոցիալիստական շինարարության և կա-  
պիտալիստական յերկրների կողմից Խորհրդա-  
յին Միությունը թշնամարար շրջապատելու  
պայմաններում աշխատավոր բնակչության  
միջոցների մորիլիզացիան ԽՍՀՄ-ի ինդուս-  
տրացման համար հանդիսանում է մեր յերկրի  
սոցիալիստական վերակառուցմանը մասնակ-  
ցելու ամենաակտիվ ձևերից մեկը:

Փոխառությունների նշանակությունը  
ԽՍՀՄ-ի ինդուստրացման համար արդեն կա-  
տարելապես գիտակցել ե քաղաքի պրոլետա-  
րիատը և համարյա թե բոլորը մեր փոխառու-  
թյուններին բաժնեգրվում են: Վատ վիճակում

և գտնվում խնայողական գործի զարգացումը։  
Պետփոխառությունների հետ միասին կատարելով միանման խնդիրներ, խնայողական դրամարկղները, սակայն, նրանցից տարբերվում են նրանով, վոր պետփոխառություններն աշխատավորական միջոցները մորիլիզացիայի յեն յենթարկում յերկար ժամկետով, այն ինչ խնայողական դրամարկղները բյուջեն են ներդրավում կարճատես խնայողություններ, ինչպես նաև ժամանակավորապես այն ազատ միջոցները, վորոնք պիտի ծախսվեն վորոշ ժամկետներից հետո։ Այն խնայողությունները, վորոնք հետ են դցվում աշխատավոր բնակչության կողմից պետփոխառությունների պարտատոմսերով, պետք ե մնան պետության տնօրենության տակ փոխառության ամբողջ ժամկետի ընթացքում։ Առանց ծայրահեղ, անխուսափելի, ամենաանհետաձգելի կարիքի փոխառությունների պարտատոմսերը պետք ե վոչ ծախել և վոչ ել դրավ դնել։ Պետության փոխ տված միջոցները ժամկետից առաջ հետ պահանջնելը խանդարում ե կապիտալ շինարարության պլանայնությունը, վորոշ չափով կազմալուծում ե այն, թուլացնելով ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման տեմպերը։ Այդ պատճառով ամեն մի աշխատավորի պարտքն ե ձեռք բերած փոխառությունների պարտատոմսերը պահել մինչև վոր կլրանա ժամկետը։ Իսկ կենցաղային և կուլտուրական պահանջների բավարար-

ժան, հանգստի և թանկ նստող իրերի համար պահանջվող անհրաժեշտ գումարները պետք ե աստիճանաբար կուտակել խնայողական գըրքույկի մեջ, ուժերը ներող գումարների սիստեմատիֆական մուծումներով։ Այդ մեծ ոգուտ ե բերում ինչպես պետության, նույնպես և խնայողական դրամարկղի ավանդատվին։ Այն փողերը, վորոնք տրվում են խնայողական դրամարկղին ի պահ, անձեռնմխելի յեն, տերոջը յեկամուտ են բերում և հետ են տրվում նրան առաջին պահանջի դեպքում։ Յերբ քաղաքի ո զյուղի ամբողջ աշխատավորական բնակչությունը կսովորի ոգավելու խնայողական դրամարկղներից, վորպես իր գանձապահից և փողի քսակից, այն ժամանակ ըրջանառության մեջ գտնվող փողի հսկայական մասը հնարավոր կլինի ոգավագործել ինդուստրացման նպատակի համար, վորը և պիտի ոժանդակե մեր աճման տեմպի արագացմանը։

Խնայողական գործի զարգացման պատմությունը նախապատերազմյան Ռուսաստանում ապացուցեց, վոր բնակչության մանր «կոպեկական» խնայողություններից, խնայողական դրամարկղները կարող եյին միլիարդի գումարներ հավաքել։ Սակայն այն ժամանակ այդ միլիարդները ծախսվում եյին վոչ թե արտադրողական ուժերի զարգացման վրա, այլ կործանարար պատերազմների վրա, հեղափոխական և ազատագրական շարժման դեմ պայ-

քարելու վրա, աշխատավորական մասսաների շահագործման վրա:

Ներկայումս, մեր պայմաններում, և՝ պետքիսառությունները և՝ խնայողական դըրամարկղները պիտք եւ և կարող են հավաքել պրոլետարական պետության տնօրենության տակ յերկրում փոշիացած աշխատավորական այն խնայողությունները և ժամանակավորապես արգատ միջոցները, վորոնք պիտի ուղղվեն սոցիալիստական չինարարության տեմպերի ուժեղացման, յերկրի արտադրողական ուժերի զարդացման, աշխատավորական մասսաների նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման վրա:

#### IV. «ԽԱՅՑՈՂՈՒԹՅԱՆ ԱՄՍՈՐՅԱԿ»

Վորպեսզի աշխատավորական բնակչության լայն մասսաներին բացատրենք խնայողական դրամարկղների խնդիրներն ու ոգուտները, - վորպեսզի դրամարկղները ներդրավենք աշխատավորական ավանդատունների նոր մասսաներ, ներկայումս ամբողջ Միության մեջ անցկացվում ե միանվագ բացատրական կամպանիա՝ «Խնայողությունների Ամսորյակ»:

Քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորները կոժանդակեն այդ կամպանիայի հաջողության, իսկ գասակարգային թշնամիները յերկրի ներսում նրա դեմ վարում են կատաղի հակաագիտացիա: Յեկ դա հասկանալի յե:

Նեպմանը, բյուրոկրատը, չարչին, կուլակը, յենթակուլակը և տերտերն իրենց դոյության կովում պայքարում են խորհրդային պետության բոլոր ձեռնարկումների դեմ, յերկրի ինդուստրացման դեմ, գյուղատնտեսության կոլեկտիվացման և մեքենայացման դեմ, մեր փոխառությունների դեմ, խնայողական դըրամարկղների դեմ, վորոնք հավելյալ միջոցները հավաքում են սոցիալիստական շինարարության համար: Դա դասակարգային պայքար ե, վորը հատկապես սուր և արտահայտվում այժմ, յերբ կյանքը դրել է շահագործողների այսակարգի, նոր բուրժուազիայի և կուլակության լիկվիդացիայի հարցը, վորպես գործնական խնդիր, յերբ քաղաքում ու գյուղում արմատախիլ ենք անում կապիտալիստական տարրերի խսկական արմատները: Այդ պատճառով «Խնայողության մերկացնել խորհրդային խնայողական դըրամարկղների հասցեյին արվող թշնամական բամբասանքները, աշխատավորական մասսաներին պետք ե ավելի հանրամատչելի և մանրամասն պատմել ճիշտը խնայողական դըրամարկղների մասին, համոզել նրանց այն բանում, վոր պետաշխինայդրամարկղներին ողնելով աշխատավորները մեծացնում են պետության միջոցները յերկրի ինդուստրացման համար, ոժանդակում են սոցիալիստական տնտեսություն կառուցելու, բացի այդ, իրենց համար ձեռնոտու և ողուտով ապահով պահում

են իրենց աշխատավորական խնայողությունները:

«Ամսորյակի» կամպանիայի ժամանակ ամեն մի աշխատավոր, առաջին հերթին բանվորը պետք է դառնա խնայողական գրամարկի պամաման և գործ դնի իր բոլոր ջանքերն այնպես, վորպեսզի համոզի իր ընկերներին, բարեկամներին ու ծանոթներին իր որինակին հետեւելու: Մեր փոխառությունների տեղավորման ժամանակ ամեն մի աշխատավոր իր սրարտականությունն և համարուժ բաժնեղրգիւլ փոխառության և դրանով ընդգծել իր սժանդակությունը ԽՍՀՄ-ի ինդուստրացմանը: Ճիշտ այլպես ել «Ամսորյակի» ժամանակ— ամեն մի բանվոր ու ծառայող պիտի ծանոթանաթե ինչ նշանակություն ունի խնայողական գործի զարգացումը պետության համար և այն ոզուտներին, վոր խնայողական գրամարկները տալիս են յուրաքանչյուր ավանդատաթիին. այդ մասին պիտի պատմե իր շրջապատին, ինչը դառնա խնայողական գրամարկի ավանդատու և ներդրավի ուրիշ աշխատավոր ավանդատուների: Դրանով իր պետության կառ ուժերը ներածին չափ ոգուտ և կիտրողանա սժանդակել շինարարության համար վերցված տեմպերին:

Փոխառություններին սոսկ բաժնեղրգիւլով, աշխատավորների նյութական աջակցույթյունը ԽՍՀՄ-ի ինդուստրացման գործում չպիտի սպասվի: Հասկանալի յե, վոր վոչ վոք

իրավունք չունի և չի յել կարող բանվորին ու ծառայողին ստիպել հարկադիր կամ կիսահարկադիր կարգով խնայողական գրամարկի ավանդատու դառնալու: Ի հարկե, «Ամսորյակին» անցկացվում է ամենակատարյալ և բացարձակ կամավորության հիմունքով և ավանդի գաղտնիքը պահելու սկզբունքով: Բայց յերբ ամեն մի բանվոր ու ծառայող գիտակցում է, թե ավանդատու դառնալով ինչ ոգությունն է ցույց տալիս պետությանը, չինարարության համար վերցված տեմպերին ոժանդակելով, այն դեպքում կամպանիայի ընթացքում խնայողական գրամարկը կներհուսեն ավանդատուների նոր միլիոններ, վորոնք գործով կիրականացնեն մեր լոգունգը. «Բոլոր աշխատավորական խնայողությունները և ժամանակավորապես ազատ միջոցներն ինդուստրացման հնգամյակի կատարման համար»: Յերբ քաղաքի ու գյուղի միլիոնավոր աշխատավորները խնայողական գրամարկի ոգնությամբ սկսեն կանոնավորել իրեց անձնական բյուջեն և ծրագրել իրենց աշխատավարձի ծախսումը, խնայողական գործը լայնորեն կզարդանա և կկարողանա մորթիլիզացիայի յենթարկել իսկապես խոչըր գործարներ, վորոնք կոդտագործվեն պրոետարական պետության կողմից սոցիալիստական չինարարության տեմպերն արտագացներու համար:



Վ ՎՈՉ ԿԱՆԽԵԿ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐ (ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՌԱՆՑ ՓՈՂԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԻ ՀԵՏ)

«Ամսորյակը» առցիալիւտական ինպուտարացման համար միջոցներ ժողովելու խնդրի հետ միասին, նպատակ ունի նաև լայնորեն աշխատավոր մասսաներին պարզաբանելու Փինանսական և ամբողջ ժողովրդական տնտեսության համար վոչ կանխիկ հաշվարկումների նշանակությունն աշխատավորական ընտելչության վճարումների վերաբերյալ պետական ու հասարակական կաղմակերպություններին ու հիմնարկներին:

Հիմնարկների հետ առանձին անձանց հաշվարկների համար զոյսություն ունեցող պրակտիկան կանխիկ դրամի միջոցով շատ անճըկուն և, պահանջվում է դրամանիշների մեծ գանգվածներ, բազմաթիվ պահեստարաններ, ավելորդ դրամարկղային աշխատանք և այլն: Վերակառուցման ըքչանի ամենակարենվոր խնդիրներից մեկը հանդիսանում է նաև դրամական հաշվարկից աստիճանաբար հրաժարվելը և վոչ կանխիկ (առանց փողի) հաշվարկումներին անցնելը ընակչության վրա ճարումների վերաբերյալ համապատասխան հիմնարկություններին և ձեռնարկություններին:

Խնայողական դրամարկղների խիստ ցանցը, վորը հաշվվում է մինչև 20 հազար միավոր,

հանդիսանալով ճյուղավորված և աշխատավուարկան ընակչության մոտ գտնվող պետության ապարատը կարող է և պետք է խաղանշանակալից դեր այդ կարեվոր խնդիրը գործնականապես իրականացնելու համար: «Խնայողությունների Ամսորյակի» կամպանիայի ժամանակ մենք պետք է հանրամատչելի դարձնենք համամի իրավություններին XIX կուսկոնդերենցիայի վորոշումը՝ ժողովրդական տնտեսության Փինանսավորման և վարկավորման սիստեմի բարելավման ժամանքին: Այդ վորոշման մեջ կոնֆերենցիան մասնանշել է հետեւյալ անհրաժեշտությունը.

«... Ե՛լ ավելի լայն տարածել վոչ կանխիկ հաշվարկումների կազմակերպման փորձը բընակչության մասսայական վճարումների ընտագակառում՝ պետական, կոմունալ և հասարակական կազմակերպություններին»:

Վոչ կանխիկ հաշվարկումները վճարումների այնպիսի մի ձև է, յերբ վճարողը հիմնարկության հետ հաշվը մաքրում է, վորին վճարում է վոչ թե կանխիկ փողով, այլ գրավոր կարգադրում է իր վարկային ընկերության (խնայողամարկղին կամ բանկին) իրենից պահանջվող վճարը կատարելու ժամանք: Այսպես որինակ, յեթե ընակարանի համար բնակարանային տրեստին յես պիտի վճարեմ 12 ռուբլի, կոմուն. Ծնտեսությանը ջրի համար 3 ռ. 50 կ., գեռախոսային կայանին հեռախոսից ոգտվելու համար 7 ռ., ելեքտրականության,

անդամավճարների և այլ վճարումների համար զանազան հիմնարկություններին 10 ռուբլի, փոխանակ 32 ռ. 50 կ. վճարելու շատ հիմնարկությունների, ման գալով, կորցնելով շատ ժամանակ, հերթի կանգնելով, հաշվարկումները ձեւակերպելու համար և այլն, յես միանգամբից կարգադրում եմ խնայողական դրամարկղին, վոր նա իմ ավանդի գումարից վճարի մատնանշած բոլոր հիմնարկություններին ինձնից հասանելիք գումարը: Այն դեպքում, խնայողական դրամարկղը դուրս է գրում իմ դրամարկան հաշվից 32 ռ. 50 կոպեկ և անցկացնում է ըստ իմ մատնանշած բաշխման այն հիմնարկությունների դրամական հաշիվների հաշվին, վորոնք պիտի փողն ստանան: Այդպիսի ձեւը շատ ձեռնտու յե վճարողին և միենաւյն ժամանակ մեր Փինանսական տնտեսությանը տալիս ե մեծ ոգուտ:

Ներկայումս հաշվարկումները վոչ կանխիկ փողով մտցված են խոշոր քաղաքներում՝ Մոսկվայում, Լենինգրադում, Խարկովում, Մինսկում, Թիֆլիսում, Ռոստովում, Դվինիկում, Աղեսայում, Սարատովում, Վարսնեժենսկում, Նովո-Սիբիրսկում, Բյաղանում և ուրիշ մի քանի քաղաքներում: 1929—30 թ. այդ ոպերացիաները պետք ե մտցվեն մյուս քաղաքներում և տնտեսապես հզոր շրջաններում և գյուղերում: Խնայողական դրամարկղները վոչ կանխիկ դրամական հաշվարկումների միջոցով կատարում են ձեւակերպում բնակարանային

վարձի, ջրմուղու, հեռախոսի, ելեկտրականության վճարումների համար, կյանքի և գույքի ապահովագրման մուծումների համար, ոստապի տոկոսների և մի քանի ուրիշ վճարումների համար:

Վորեւ անհրաժեշտ հաշիվ վճարելու համար, խնայողական դրամարկղի ավանդատուն տանը լրացնում և ստորագրում ե կարգադրության (հրամանի) բլանկը, վրան գրում ե իր խնայողական դրամարկղի հասցեն և առանց դրոշմանշի կարգադրությունը հաշվի հետ միասին գցում ե փոստարկղ: Խնայողական դրամարկղը վճարողի ավանդից հաշիվը վճարում ե և նրան ուղարկում ե անդորրագիր վճարման մասին. անդորրագրի առաքման համար, փոստը գանձում ե 5 կոպեկ: Ավանդատվի կարգադրությամբ խնայողական դրամարկղն ինքն ե հսկում վճարումների ժամկետներին և կատարում ե անհրաժեշտ հաշվարկումները: «Ամսորյակի» ժամանակ ամեն մի բանվոր և ծառայող, ամեն մի ազնիվ աշխատավոր պետք ե վերանայի իր հաշվարկումների ձևերը հիմնարկություններին և կազմակերպություններին վճարելիք պարտադիր կանոնավոր վճարումների վերաբերյալ և վերածի այն վոչ կանխիկ հաշվարկի ձևերի (առանց փողի) իր խնայողական դրամարկղի միջոցով, իսկ դըրա համար հարկավոր ե դառնալ խնայողական դրամարկղի ավանդատու:

VI Ի՞նչ ԱՐՏՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈԳՈՒՑՆԵՐ  
ՅԵՎ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՏԱԼԻՍ  
ՊԵՏԱՇԽԵԽՆԱՅՐԱՄԱՐԿՂՆԵՐՆ ԻՐԵՆՑ  
ԱՎԱՆԴԱԾՈՒՆԵՐԻՆ

Ավանդատուների համար հիմնական ո-  
գուտը հանդիսանում ե ավանդի ապահո-  
վությունն ինչպես նաև այն յեկամուտը,  
վորը նրանք ստանում են իրենց խնայողու-  
թյունները և ժամանակավորապես ազատ մի-  
ջոցները խնայողական դրամարկղներին պահ  
տալու դեպքում։

Անժամկետային ավանդների համար ա-  
վանդատուն ստանում ե 8 տոկոս տարեկան,  
այսինքն 100 ռ. ավանդի համար մի տարվա  
ընթացքում։

Ժամկետային ավանդների համար (3  
տմսով, 6 ամսով, տարով և այլն) խնայողա-  
կան դրամարկղները վճարում են 9 տոկոս  
տարեկան անհատ քաղաքացիների ավանդնե-  
րի համար։ Վոչ ժամկետային ավանդների  
տոկոսները յուրաքանչյուր տարվա վերջին  
(30-ին սեպտ.) ավելացվում են ավանդին։  
Այնուհետև տոկոս տալիս ե վոչ միայն հիմ-  
կան ավանդը, այլև նախընթաց տարիա տո-  
կոսները, վորոնք միացվել են ավանդին։

Յեթե ավանդատուն իր ավանդը հետ ե  
ստանում տարվա կեսին, այն դեպքում նրան  
հասանելիք տոկոսն այդ ժամանակվա համար  
վճարվում ե անհապաղ։ Պետաշխինայդրա-  
մարկղին հանձնված դումարների և արժեք-

ների համար պատամիանատու յէ ԽՍՀՄ-ի  
կառավարությանը։

Ավանդատվի առաջին պահանջի դեպ-  
քում, հենց վոր ներկայացնի խնայողությունը  
կարող ե հետ ստանալ իր ավանդի մի մասը  
կամ լիովին։

Խնայողական դրամարկղներում սահ-  
մանված ե ավանդատունների բոլոր ավանդա-  
յին ոպերացիանների վերաբերյալ կատարյալ  
գաղտնիք։

Բացի ավանդատուններից և նրա որինա-  
կան ներկայացուցիչներից, ավանդի գաղտ-  
նիքը կարող ե բացվել բացառապես դատա-  
կան որգանների սկահանջմամբ և դատախա-  
զության և միմիայն նրանց մոտ քննվող  
քրեյական գործերի վերաբերյալ։

Իսկ քննչական որգանները կարող են ա-  
վանդների վերաբերյալ տեղեկություններ  
պահանջել միայն դատավորի գրավոր վորոշ-  
մամբ, ուղայն, նույնպես քրեյական բնույթ  
կրող գործերի վերաբերյալ։ Ավանդների յե-  
կամուտները խնայողական դրամարկղում ա-  
զատվում են ամեն տեսակի հարկերից և  
տուրքերից։

Որենքով կամ կտակով խնայողական դը-  
րամարկղները մուծված ավանդների համար  
ժառանգներից ժառանգական տուրքեր չեն  
դանձվում, անկախ ավանդների գումարից։

## VII ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

(Վորոշված ժամկետով մուծված ավադներ)

Խնայողական դրամարկղների ոպերացիայի այդ ձևն առանձնահատուկ կարեռ նշանակություն ունի յուրաքանչյուր աշխատավորի համար։ Այդ ձևի նշանակությունն այն է, վոր խնայողական դրամարկղները ոժանդակում են ավանդատվին կուտակելու անհրաժեշտ գումար թանկ նատող իր ձեռք բերելու համար, արձակուրդն ոգտագործելու համար և այլն։ Խնայելու այդ ձևը հետեւյալն է. ավանդատուն սիստեմատիկորեն խնայդրամարկղը հավասարաչափ գումարների մուծումներ կատարելու միջոցով (յերկու շաբաթը մի անգամ, կամ յուրաքանչյուր ամիս) կուտակում ե իրեն անհրաժեշտ փողը դրած նպատակի համար։ Այդ խնդիրը հետացնելու համար ավանդատուն կարող է խրնայդրամարկղի հետ տիպարացին պայմանագիր կնքել ժամկետային ավանդի համար 6-ից 12 ամիս ժամանակով։ Այդ պայմանագրի հիման վրա ավանդատուն յերկու շաբաթը մի անգամ, կամ ամսեամիս դրամարկղ ե մուծում վորոշ գումար։ Դրամարկղն այդ մուծումները նշանակում ե հատուկ փաստաթուղթ-քարտը վրա, վորը մնում է ավանդատվի մոտ։ Յերբ ամբողջ կուտակվելիք գումարը վճարվում է, ավանդատուն կարող է խնայդրամարկղին վերադարձնել իր փաստա-

թուղթ-քարտը և փողը հետ ստանալ աճած տոկոսներով, կամ թե կարգադրել, վոր կուտակված փողն ավանդի փոխադրվի։

Այդ ձևի առավելություններն առաջին՝ կայանում են նրանում, վոր ժամկետային ավանդի համար խնայդրամարկղը վճարում է 9 տոկոս, իսկ յերկրորդը, վոր հենց այդ ժամկետային ավանդի փաստաթղթի վրա արդեն նշանակված է, թե կուտակողը յուրաքանչյուր յերկու շաբաթը կամ ամսական ինքչան պիտի մուծե. այնպես վոր ավանդատուն իրեն դնում է խիստ պայմանների մեջ, վորոնք ողնում են նրան վորոշված ժամանակին կուտակել պահանջվող գումարը։

Ժամկետային ավանդների փաստաթուղթ-քարտերը լինում են զանազան գումարների՝ 12-ից մինչև 100 ռուբլի, կախված նրանից, թե այն ավանդատուն, վորը հայտարարել ե ժամկետային ավանդի մասին, կես կամ մի տարվա ընթացքում ինչ գումար է ուղղում կուտակել։ Ժամկետային ավանդը կարող է հետ պահանջվել մինչև ժամկետի լրանալը, սակայն այն դեպքում ավանդի տոկոսները վճարվում են վոչ թե 9, այլ 8 տոկոսի հաշվով, ինչպես սովորական ավանդի համար։

## VIII ՊԵՏՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱ- ՏՈՄՍԵՐԻ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐ

Խնայդրամարկղները ծախում և գնում են

պաշտոնական դնով պետիոխառությունների պարտատոմսերը, վճարում են ժամկետային կուպոնների և տիրած դուրս. յեկած պարտատոմսերի արժեքը, ինչպես նաև շահումները:

Խնայողական դրամարկղներն ընդունում են նաև պետիոխառությունների պարտատոմսերը կառավարելու և առանց կառավարելու պայմանով: Խնայողական դրամարկղներն ստուգում են կառավարելու պայմանով ընդունած պարտատոմսերը տիրաժային աղյուսակներով և յեթե վորեե պարտատոմսի ընկել ե շահում, խնայողական դրամարկղն այդ մասին տեղեկացնում ե պարտատոմսի տիրոջ, իսկ շահած գումարը փոխանցում ե նրա դրամական հաշվին: Կուպոնների կտրելը նմանապես խնայողական դրամարկղն և կառարում և նրանց արժեքը նույնպես փոխանցում ե ավանդատվի դրամական հաշվին: Յեթե պարտատոմսերը պահ են տրված առանց կառավարելու, խնայողամարկղը չկառավարում, ավանդատուն ինքը պիտի հսկի կուպոնների պահպանությանը և շահումներին խաղարկության աղյուսակներով:

Մինչև 200 ռուբլի կառավարելու իրավունքով պահ տրված անվանական արժեքի պարտատոմսերին խնայողամարկղները հըսկում են ձրի: Իսկ յեթե պահ է տրված պիտի քան 200 ռուբլի, խնայողամարկղը գանձում է յուրաքանչյուր 100 ռուբլի պարտատոմսի համար 7 կոպեկ: Բանդորների և ծառայող-

ների կոլեկտիվների կողմէց կառավարելու իրավունքով պահ տրվող պարտատոմսերը խընայըրամարկղը պահելը և շահումներին հըսկելը ձրի յեկատարում, առանց գումարի սահմանափակման:

Պարտատոմսերն ընդունվում են ի պահ առանց գումարի և ժամկետի սահմանափակման (մինչև վոր պարտատոմսի տերը կտրհանջի):

Խնայողական դրամարկղից ստացած պահ տալու վկայականով կլիյենտը հետագայում հնարավորություն ունի պահ տալու պետիոխառությունների ուրիշ պարտատոմսեր:

Պահ տրված պետիոխառությունների պարտատոմսերի համար, վորոնց համար ուրենքով սահմանված և փոխատվություն տալ, ավանդատուն կարող ե փոխատվություն ստանալ պարտատոմսերի անվանական արժեքի մինչև 60 տոկոսի չափով: Ստացած փոխատվությունը նա կարող ե մարել լիովին կամ մաս-մաս:

## IX ԿՏԱԿԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՈՐԵՆՈՒԹՅՈՒՆ

Խնայողական դրամարկղի յուրաքանչյուր ավանդատու իրավունք ունի խնայողական դրամարկղի գրքույիկի վրա նշան անելու կամ թե հատուկ հայտարարություն տալու միջոցով մատնանշել այն անձանց, վորոնց պիտի տրվի ավանդը նրա մահից հետո: Ընդ պիտի տրվի ավանդը նրա մահից հետո: Ընդ վորում տվյալ դեպքում պարտագիր չե, վոր

անձը, վորին ավանդատուն կտակում ե  
իր ավանդը, լինի որինական ժառագը:

Կարելի յե ամբողջ ավանդը կտակել մի  
անձի լիովին, կամ թե մաս-մաս միքանի ան-  
ձանց:

Այդպիսի կտակարարական տնորենու-  
թյուններով ավանդների հանձնումը խնայ-  
դրամարկղների կողմից կատարվում ե առանց  
վորևե ձեականության ավանդատվի մահվան  
մասին տեղեկանք և փող ստացողի անձնավո-  
րությունը վկայող փաստաթուղթ ներկայա-  
ցվելուց հետո:

Անկախ արգեն արված կտակից, ավան-  
դատուն իր կենդանության ժամանակ իրա-  
վունք ունի տնորինելու ավանդն իր սեփական  
հայեցողությամբ:

## X ԱԿԿՐԵԴԻՏԻՎՆԵՐ

Ակկրեդիտիվը հանդիսանում է փողը ճա-  
նապարհին պահելու ամենահուսալի և ապա-  
հով միջոցը:

Յուրաքանչյուր քաղաքացի, թեկուզ խը-  
նայդրամարկղի վոչ ավանդատու, յեթե ցան-  
կանում ե ճանապարհին պաշտպանվել կորըս-  
տից, խնայդրամարկղը մուծվող փողի փո-  
խարեն կարող ե ստանալ հատուկ փաստա-  
թուղթ: Այդ փաստաթղթով, վորը կոչվում  
ակկրեդիտիվ, նրա մեջ նշանակված գումարը  
լիովին կամ մաս-մաս կարելի յե ստանալ  
ԽՍՀՄ-ի բոլոր խնայդրամարկղներից (բացի  
գործակալական դրամարկղներից):

## ՓՈՂԼԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐ

Խնայդրամարկղի ավանդատուն իրա-  
վունք ունի իր ամբողջ ավանդը կամ նրա մի  
մասը փոխադրել ուրիշ խնայդրական դրա-  
մարկղ:

Փոխադրությունը կարելի յե կատարել  
փոստով կամ հեռադրով:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ  
ԳՐԲՈՒԹԿԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊԲՈՒՄ

Խնայդրամարկղի գրքույկը կորցնելու  
գեպքում ավանդատուն պետք ե հայտարա-  
րություն տա խնայդրամարկղին կորցնելու  
մասին, վորից հետո խնայդրամարկղը նոր  
գրքույկ ե տալիս:

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐ

Յեթե անչափահաս ավանդատուն ինքը  
խնայդրամարկղը փող ե մուծում իր անու-  
նով, այն գեպքում ավանդը նա ինքն ե տնո-  
րինում անկախ, առանց խնամակալի կամ հո-  
գաբարձվի մասնակցության:

ՀԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՏՈՒԲՔԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ-  
ԹՅՈՒՆ

Բացի ուրիշ հարմարություններից, վո-  
րոնք տրվում են ավանդատուներին, խնայ-  
դրամարկղները նրանցից ընդունում են զա-  
նազան հարկերի և տուրքերի վճարներ, նույն  
թվում և դյուղհարկը:

Ավանը ատություղացին բավական է,  
վոր հայտարարություն տա խնայդրամարտ  
կղին, վոր ցանկանում ե վճարել հարկը, կցե-  
լով նրան իր հարկաթերթը, վորից հետո վը-  
ճարման յենթակա գումարը գուրս ե դրվամ  
խնայդրամարկղի գրքույկից, հարկաթերթի  
վրա նշան անելով փողի ստացման մասին:

### ՄԱՆՐ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐ

Վորպեսզի հեշտացվի աշխատավորներին  
մանր գումարներով իրենց խնայողություն-  
ները կուտակելու հնարավորությունը, խնայ-  
դրամարկղները տանը խնայելու սիստեմ են  
մտցրել դրամ խնայելու տուփերի միջոցով,  
ինչպես նաև դրոշմանիշային խնայողություն-  
ների միջոցով:

Խնայդրամարկղներում վոչ այնքան մեծ  
գումարով վաճառվում են հատուկ դրամա-  
տուփեր, վորոնց բանալին բոլոր դրամա-  
կղներն ունեն: Դրամատուփերը բաց են թող-  
նվում վոչ այնքան մեծ վճարով— իրենց ինք-  
նարժեքով: Աշխատավորը հնարավորություն  
ունի դրամատուփերում հավաքվող մանր խը-  
նայողությունների գումարները տեղավորել  
ժամանակ առ ժամանակ խնայդրամարկղում  
վորպես ավանդ: Դրա համար բավական ե դը-  
րամատուփը տանել խնայդրամարկղ, վորտեղ  
այն բացվում ե և տիրոջ ներկայությամբ  
հաշվվում ե հավաքված փողը:

Կարելի յե մանր խնայողություններ կու-  
տակել նաև դրոշմանիշերի միջոցով: Դրա  
համար բավական ե սովորական թերթին  
փակցնել 5 կամ 10 կոպ. արժողությամբ դը-  
րոշմանիշեր:

Յերբ թերթի յերեսը լրացվի մէ ոռութու  
գումարի դրոշմանիշերով, այն դեպքում թեր-  
թը կարելի յե հանձննել խնայդրամարկղին  
վորպես կանխիկ փող:

Հենց այդտեղ ել այդ գումարի խնա-  
յողական գրքույկի ե տրվում, իսկ առաջուց  
արդեն ավանդ մուծած լինելու դեպքում այդ  
գումարը միացվում ե ավանդին:

### ՆՊԱՏԱԿԱՑԻՒՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ձեի խնայողությունները խնայողա-  
կան գործը քաղաքում զարգացնելու համար  
ունեն խոշոր նշանակություն: Այդ խնայո-  
ղությունների նպատակն ե, վոր աշախատա-  
վորերն իրենց առորյա դործածության հա-  
մար ձեռք բերեն վորեւե իր, կամ թե կուլ-  
տուր-կենցաղային նպատակի համար վորեւե  
ծախք կատարեն: Այսպես, որինակ, հեծանիվ  
գնելը, կոլեկտիվորեն ոգտվելու համար մո-  
տորային նախակ գնելը, եքսկուրսիայի, ար-  
ձակուրդն անցկացնելու համար և այլն:

### ԵԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վորպեսզի բանվորների, ծառայողների,  
չքավորների, միջակների մասսաները կարո-

ղանան իրապես լրիվ ոդտվել խնայողական դրամարկղների սպասարկություններից, ան- հրաժեշտ ե հենց խնայողական դրամարկղնե- րի ապարատը բարելավել և մոտեցնել աշխա- տավորական բնակչության։ Խնայդրամար- կղի աշխատանքից պետք ե վտարել քաշըու- կը, բյուրոկրատիզմն, ավանդատվին կոպիտ, վոչ ընկերական մոտեցումը։ Խնայդրամար- կղն անհրաժեշտ ե վերածել պարզ և արագ գործող ապարատի աշխատավորական ավան- դատուներին սպասարկելու համար։ Խնայդր- ամարկղների խսկական ցանցը պետք ե ան- միջականորեն մոտեցնել աշխատավորական բնակչության։ «Խնայդրամարկղը՝ գեպի մասսաները»։

Վորպեսզի խնայողական ապարատներին ոգնենք հաջողությամբ իրենց աշխատանքը զարգացնելու համար, վորպեսզի այդ աշխա- տանքը պարզեցվի, մոտեցվի բնակչության աշխատավորական մասսաներին, ձեռնարկու- թյուններին, հիմնարկություններին, գյուղ- խորհուրդներին կից կազմակերպված են պետվարկին և խնայողական գործին ոժանդա- կող հանձնաժողովներ։

Պրոլետարները պետք ե իրենց հասարա- կական հսկողության տակ առնեն այդ հանձ- նաժողովների աշխատանքը, նմանապես և խնայողական դրամարկղների աշխատանքը։ Բանվորներ, ծառայողներ, մատնանշեցե՛ք խնայդրամարկղների աշխատանքի թերու-

թյունները, ակտիվացրե՛ք ձեր ոժանդակող հանձնաժողովներին, ոգնեցե՛ք պրոլետա- րական պետությանը կարգի բերելու պարզ ա- պարատ աշխատավորական խնայողություն- ները և ժամանակավորապես ազատ միջոցնե- րը հավաքելու սոցիալիստական շինարարու- թյան մեջ գործի համար։

Խնայողական գործը, խնայողական դը- րամարկղների աշխատանքը՝ պրոլետարական լայն հսկողության տակ։

### ԼՈԶՈՒՆԳՆԵՐ ԱՄՍՈՐԹԱԿՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՌԹԻՎ

1. Խնդուստրացման հնգամյակի մեջ առ- նենք բոլոր աշխատավորական խնայողու- թույնները։ Յերկարատեսները՝ փոխառու- թյունների, խսկ ժամանակավորապես ազատ միջոցները՝ խնայդրամարկղների մեջ։

2. Աշխատավորական ավանդը խնայդը- րամարկղ մուծելը՝ նշանակում ե սոցիա- լիստական կառուցման մեջ նոր աղյուս դնել։

3. Փոխառությունների և խնայդրա- մարկղների գեմ են—տերտերը, կուլտակը, ա- ռևտրականը, բատրակը, չքավորը և միջակը նրանց կտան հարկավոր հարված։

4. Խնդուստրացման հնգամյակին տալիս ես Փինանսական հզորություն։ յերկարատես խնայողությունները՝ փորառությունների խսկ ժամանակավորապես ազատ միջոցները՝ խնայդրամարկղների մեջ։

5. Ստուգիր, թե արդյոք քո ոժանդակող  
հանձնաժողովն ամեն ինչ արել ե փոխառու-  
թյունների և խնայդրամարկղների համար:

6. Միլիոնավոր բանվորների և գյուղա-  
ցիների աշխատավորական խնայողություննե-  
րը կոժանդակեն գյուղատնտեսության արագ  
կոլեկտիվացման:

## 7. ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԸ — ԴԵՊԻ ՄԱՍՍԱ- ՆԵՐԸ:

8. Պրոլետար, քո նյութական մասնակ-  
ցությունը յերկրի ինդուստրացմանը չի լինի  
լրիվ, մինչև վոր խնայդրամարկղի ավանդա-  
տու չդառնաս:

9. Խնայդրամարկղն ոժանդակում ե կու-  
տակելու անհրաժեշտ գումարներ հառաջիկա-  
ծախքերի համար:



